# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

## N ՀՀ ԿԱ Ո-ԾՀԾՁԲ-15/3-ԱՎՏՍ/2017/ՏՎԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** «20» 11. **2017թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 28.04.2017թ.-ին կնքված N **ՀՀ ԿԱ Ո-ԾՀԾՁԲ-15/3-ԱՎՏՍ/2017/ՏՎ** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան, գինը և վճարման կարգը

1.1 Սույն համաձայնագրով կողմերը համաձայնության եկան 28.04.2017թ.-ին կնքված N **ՀՀ ԿԱ Ո-ԾՀԾՁԲ-15/3-ԱՎՏՍ/2017/ՏՎ** Պայմանագրի գինը ավելացնել մինչև 20%-ի չափով, որը կկազմի **15 800 000** (տասնհինգ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը Պատվիրատուն պարտավորվում է վճարել սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**ՀՎՀՀ 01840082**
**հեռ. 59-68-57**
**Էլ. հասցե police-gnumner@rambler.ru**

Ա. Համբարյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

**Կատարող**

**«Գարանտսերվիս» ՍՊԸ**
**ք.Երևան, Թբիլիսյան խճ. N20**
**«Կոնվերսբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 193004674290**
**ՀՎՀՀ 00840437**
**էլ. հասցեն՝ hyundaigarant@yahoo.com**
**հեռ. 28-54-47**

Մ. Նիկողոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
<<20 >> 11 2017թ.
Համաձայնագիր N1
N ՀՀ ԿԱ Ո-ԾՀԾՁԲ-15/3-ԱՎՏՍ/2017/ՏՎ գնման պայմանագրի

Վճարման

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1. | Ավտոմեքենաների տեխսպասարկման ծառայություններ / CPV- 50111130/17 | | | | | | | | | | | 15800000 | 15800000 | 15800000 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | 15 800 000 |

ժամանակացույց

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**ՀՎՀՀ 01840082**
**հեռ. 59-68-57**
**էլ. հասցե police-gnumner@rambler.ru**

/ՀՀ ոստիկանության .../
(ստորագրություն)

**Կատարող**
**«Գարանտսերվիս» ՍՊԸ**
**ք.Երևան, Թբիլիսյան խճ. N20**
**«Կոնվերսբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 193004674290**
**ՀՎՀՀ 00840437**
**էլ. հասցեն՝ hyundaigarant@yahoo.com**
**հեռ. 26-34-47**

Մ.Շիկոյան